ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«23» մայիսի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ շրջանավարտներ

Վերջին զանգի այս հուզիչ և հիշարժան օրը ի սրտե շնորհավորում եմ ձեզ: Այսօր դուք հրաժեշտ եք տալիս ձեր կյանքի կարևոր ու անմոռանալի փուլին՝ դպրոցական տարիներին: Այս տարիները ձևավորել են ձեր աշխարհայացքը, դաստիարակել ձեզ որպես արժանավոր քաղաքացիներ և տվել գիտելիքներ՝ դեպի մեծ կյանք ճանապարհ բացելու համար: Թող ձեր ընտրած ուղին լինի լույսով ու հաջողությամբ լի, իսկ կյանքի յուրաքանչյուր քայլում ուղեկցեն վստահությունը, նպատակասլացությունը և անխոնջ աշխատասիրությունը:

Հարգելի՛ ուսուցիչներ, շնորհակալություն ձեզ նվիրված աշխատանքի, սիրո և համբերության համար, որով դուք այսօրվա շրջանավարտներին մղեցիք դեպի գիտելիքի, բարության և հայրենասիրության ուղի: Ձեր աշխատանքն անգնահատելի է:

Սիրելի՛ ծնողներ, այսօր դուք ևս հպարտանալու առիթ ունեք: Ձեր զավակների ձեռքբերումները ձեր սրտացավության, հոգատարության և շարունակական աջակցության արդյունքն են:

Սիրելի շրջանավարտներ կրկին շնորհավորում եմ, թող ձեր ապագան լինի լուսավոր և հաջողություններով լի: Թող վերջին զանգի ձայնը ձեր հիշողություններում մշտապես հնչի որպես նոր ճանապարհի սկիզբ՝ լի հաղթանակներով, երջանկությամբ ու բարի գործերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ